

Փաստ. անվանումը	Ուսման վարձի գեղջման կարգ
Փաստ. N	ԵՄՀ/ԸԿ-ԿԳ-24-01
Հաստատման ամսաթիվը	02/11/2009
Արձանագրության N	
Հաստատող մարմինը	Գիտական խորհուրդ
Մշակող	
Ներդրման/իրականացման պատասխանատու	Ուսումնամեթոդական և գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր



Փաստաթղթի փոփոխությունները

Ամսաթիվ	Կատարված փոփոխություն	Անուն, ազգանուն, պաշտոն, Ստորագրություն
12/12/2014	Կարգը փոխվել է մասնակիորեն	Սուրեն Օհանյան, Գիտական խորհրդի նախագահ
06/02/2018	Կարգը փոխվել է մասնակիորեն	Սուրեն Օհանյան, Գիտական խորհրդի նախագահ



1. Եվրասիա միջազգային համալսարանի ուսանողի ուսման վարձի գեղչման կարգը սահմանվում է Եվրասիա միջազգային համալսարանի կանոնադրությամբ և սույն կարգով:
2. Ուսանողական գեղչը Եվրասիա միջազգային համալսարանի բյուջեի ծախսային մասում նախատեսված ֆինանսական միջոցների, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից լրիվ կամ մասնակի ուսանողի ուսման վճարի փոխհատուցումն է:
3. Ըստ Եվրասիա միջազգային համալսարանի մասնագիտությունների Համալսարանի կողմից հատկացված ուսման վճարի փոխհատուցման ուսանողական գեղչերի քանակն անփոփոխ է:
4. Ուսման վճարի լրիվ փոխհատուցում ուսանողական նպաստի ձևով, Համալսարանի կողմից տրամադրվում է.
 - 4.1. առաջին կարգի հաշմանդամ ուսանողներին,
 - 4.2. մրցութային յուրաքանչյուր քննությունից նվազագույն 18 միավոր ունեցող դիմորդներին:
5. Սույն կանոնակարգի 4-րդ կետով նշված անձանց նպաստները ուսման վճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցմամբ, փաստաթղթերի առկայության դեպքում, ձևակերպվում և տրամադրվում են 1-ին կուրսի սկզբում և պարտադիր կարգով վերանայվում է յուրաքանչյուր ուսումնական կիսամյակի սկզբում՝ հիմք ընդունելով ուսման բարձր առաջադիմությունը /ուսանողի նվազագույնը ՄՈԳ-ը սահմանելով 3.5 միավոր/:
6. Եվրասիա միջազգային համալսարանը, ուսանողի սոցիալական վիճակի և բարձր առաջադիմության արդյունքների հաշվառմամբ ուսման վճարն ուսանողական նպաստի ձևով գեղչում է հետևյալ կարգավիճակ ունեցող անձանց սահմանված կարգով վավերացված համապատասխան փաստաթղթերի ներկայացման դեպքում.
 - 6.1. 30% գեղչ՝ մրցութային յուրաքանչյուր քննությունից նվազագույն 16 միավոր ունեցող դիմորդներին:
 - 6.2. 50% գեղչ՝ սոցիալապես անապահով և երկկողմ ծնողազուրկ ընտանիքի դիմորդներին, փաստաթղթերի առկայության դեպքում ձևակերպվում և տրամադրվում են 1-ին կուրսի սկզբում և պարտադիր կարգով վերանայվում են յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում:
 - 6.3. 25% գեղչ՝ երկրորդ և երրորդ կարգի հաշմանդամություն ունեցող ուսանողներին,
 - 6.4. 15% գեղչ՝ միակողմ ծնողազուրկ ուսանողներին,
 - 6.5. 10%՝ վճարովի ուսուցման համակարգում երկու և ավելի ուսանող երեխա ունեցող ընտանիքների ուսանողներ,
 - 6.6. 20% մինչև երկու տարեկան երեխա ունեցող ուսանողները,
 - 6.7. 10% ԼՂ պատերազմի մասնակցի երեխաներին, 20% զոհված ազատամարտիկի

երեխաներին,

- 6.8. 30% զեղչ՝ բանակից զորացրված, մարտական հերթապահություն իրականացրած դիմորդներին,
- 6.9. 30% զեղչ՝ սահմանամերձ բնակավայրերից դիմորդներին,
- 6.10. 10% խրախուսական զեղչ, տվյալ ուստարվա համար, այն ուսանողներին, ովքեր ընդունելության շրջանում աջակցել են համալսարանին, իրենց լավագույն փորձը փոխանցելով դիմորդին:

7. Մույն կարգի համաձայն ուսանողական բոլոր տեսակի զեղչերից օգտվելու համար դիմումներն ընդունվում են յուրաքանչյուր տարվա օգոստոսի 25-ից մինչև սեպտեմբերի 10-ն ընկած ժամանակահատվածում: Դիմումների քննարկումը կազմակերպվում է ընդունող հանձնաժողովի կողմից: Դիմումների ընդունման վերջնաժամկետի ավարտից հետո քննական կամ ստուգարքային պարտքեր ունեցող ուսանողների դիմումները ենթակա չեն քննարկման:

8. Հարգելի պատճառով (ակադեմիական արձակուրդ առողջական վիճակի, զինծառայության մեկնելու կամ ուսանողական փոխանակման ծրագրերով արտասահման ուսումնառության գործուղվելու կապակցությամբ) ուսումնառությունն ընդհատած ուսանողի համար վերականգնվելիս պահպանվում է նախկինում ունեցած ուսանողական նպաստ ստանալու իրավունքը:

Վերջին հանգամանքը պարտադիր կարգով նշվում է ուսումնառության ընդհատումը ձևակերպող հրամանում: